ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
NATIONAL EDUCATION COUNCIL

«Ազգային կրթության խորհրդի» բաց նամակը՝ 2026-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին

«Ազգային կրթության խորհուրդը» 2026-ի հունիսին 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները դուրս է համարում քաղաքական մրցապայքարի պարզ տարմաբանությունից, այն դիտարկելով հայ ազգի համար արժեհամակարգային և քաղաքակրթական ընտրության ճամփաբաժան: Հետևաբար, խորհուրդը բաց նամակով դիմում է մասնակից քաղաքական ուժերին՝ հստակեցնելու նրանց տեսակետը գիտա-կրթական ոլորտի ճակատագրի վերաբերյալ՝ ակնկալելով երեք պարզ հարցի հրապարակային պատասխան.

Իշխանություն ունենալու պարագայում արդյո՞ք պատրաստ են՝

Ա. Հանրակրթության բովանդակությունը կառուցել ազգային-քաղաքակրթական արժեհամակարգի հենքով՝ ի տարբերություն ապազգայնացման ներկա միտումների,

Բ. Երաշխավորել, որ ներկայում շրջանառության մեջ դրված 229 դպրոցների փակման ծրագիրը կչեղարկվի և դպրոցները չեն փակվի:

Գ. Մշակել և իրականացնել բարձրագույն կրթության և գիտության առաջընթաց զարգացման ազգային ռազմավարություն:

Հավելենք, որ բոլոր պատասխանները (ներառյալ պատասխանի բացակայությունը) հրապարակվելու են:

Հարգանքներով՝ «Ազգային կրության խորհուրդ»
29.05.26թ.
azgayinakademia@gmail.com